ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**« 14 » նոյեմբերի 2022թ. №44-Ա**

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՕՐԵՆՔԻ ՈՒԺՈՎ ԳՈՒՄԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով, 64-րդ հոդվածի 1-ին մասով՝

**համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Լոռի Բերդ համայնքի ավագանու 2022թ. նոյեմբերի 14-ին օրենքի ուժով գումարված ավագանու առաջին նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ներսիսյան Արայիկ Մենժիկի | [signature] | | |
| Վարդումյան Հայկ Վազգենի | [signature] | | |
| Շահնազարյան Թամարա Էդիկի | [signature] | | |
| Պապյան Հարություն Միշիկի | [signature] | | |
| Ներսեսյան Իրինա Վազգենի | [signature] | | |
| Չիբուխչյան Արման Հրաչիկի | [signature] | | |
| Սիմոնյան Անահիտ Բաբկենի | [signature] | | |
| Պապիկյան Վահրամ Ռոմիկի | [signature] | | |
| Մարգարյան Սիլվա Ստեփանի | [signature] | | |
| Վերմիշյան Կարլեն Ջիվանի | [signature] | | |
| Չատինյան Վանո Վալերի | [signature] | | |
| Գրիգորյան Աննա Հրայրի | [signature] | | |
| Սերոբյան Անի Սամվելի | [signature] | | |
| Չատինյան Արթուր Հրաչիկի | [signature] | | |
| Ասրյան Աննա Տիգրանի | [signature] | | |

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

կ.տ.

**2022թ. նոյեմբերի 14**

**գ. Լոռի Բերդ**

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու

2022թ. նոյեմբերի 14-ի №44-Ա որոշման

# ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՕՐԵՆՔԻ ՈՒԺՈՎ ԳՈՒՄԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

1) ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի նորընտիր ղեկավարի երդման արարողության կարգը հաստատելու մասին

2) ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու ժամանակավոր նստավայր սահմանելու մասին

3) ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

# ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 14 » նոյեմբերի 2022թ. №45-Ա

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածով՝

**համայնքի ավագանին որոշում է.**

1.Հաստատել Լոռի Բերդ համայնքի նորընտիր համայնքի ղեկավարի երդման արարողության կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ներսիսյան Արայիկ Մենժիկի | | | |
| Վարդումյան Հայկ Վազգենի | | | |
| Շահնազարյան Թամարա Էդիկի | | | |
| Պայյան Հարություն Միշիկի | | | |
| Ներսեսյան Իրինա Վազգենի | | | |
| Չիբուխչյան Արման Հրաչիկի | | | |
| Սիմոնյան Անահիտ Բաբկենի | | | |
| Պապիկյան Վահրամ Ռոմիկի | | | |
| Մարգարյան Սիլվա Ստեփանի | | | |
| Վերմիշյան Կարլեն Ջիվանի | | | |
| Չատինյան Վանո Վալերի | | | |
| Գրիգորյան Աննա Հրայրի | | | |
| Սերոբյան Անի Սամվելի | | | |
| Չատինյան Արթուր Հրաչիկի | | | |
| Ասրյան Աննա Տիգրանի | | | |

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.տ.

**2022թ. նոյեմբերի 14**

**գ. Լոռի Բերդ**

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու

2022թ. նոյեմբերի 14-ի №45-Ա որոշման

# Կ Ա Ր Գ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ

1. Նորընտիր համայնքի ղեկավարի երդման արարողության նպատակով՝ համայնքի ղեկավարի ընտրվելուց հետո երրորդ օրացուցային օրը, ժամը 11.00-ին հրավիրվում է ավագանու նիստ: Նիստը տեղի է ունենում համայնքի ավագանու նստավայրում:

2. Համայնքի ղեկավարի երդման արարողության նախապատրաստման և անցկացման կազմակերպման պատասխանատուն «Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկն է (այսուհետ՝ աշխատակազմ):

3. Աշխատակազմը ժամը 10.00 - 11.00-ն գրանցում է ավագանու անդամներին:

4. Ավագանու նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է առնվազն ավագանու 8 (օրենքով սահմանված թվաքանակի կեսից ավելին) անդամ: Եթե կես ժամվա ընթացքում չի ապահովվում նիստի իրավազորությունը, ապա ավագանու նիստ է գումարվում հաջորդ օրը, ժամը 11.00-ին:

5. Նիստը վարում է ավագանու նիստին ներկա՝ տարիքով ավագ անդամը:

6. Նիստը վարողը հայտարարում է նիստի օրակարգը՝ համայնքի ղեկավարի երդում:

7. Նիստին ներկա են գտնվում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներկայացուցիչը (համաձայնությամբ), Լոռու մարզպետը մարզպետը, Հայ Առաքելական եկեղեցու Գուգարաց թեմի առաջնորդը (համաձայնությամբ), հրավիրված պետական, եկեղեցական, մշակութային և հասարակական գործիչներ:

8. Նիստը վարողն ընտրված համայնքի ղեկավարին հրավիրում է ամբիոնի մոտ: Ամբիոնին մոտենալուց հետո՝ ընտրված համայնքի ղեկավարն արտասանում է երդման տեքստը.

«Ստանձնելով Լոռի Բերդ համայնքի ղեկավարի պաշտոնը՝ երդվում եմ.

Համայնքի ղեկավարի լիազորություններն իրականացնելիս պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, օրենքները, համայնքի ավագանու որոշումները, ազնվորեն և բարեխղճորեն կատարել համայնքի ղեկավարի լիազորությունները, ծառայել համայնքի բարգավաճմանը, գործել ի բարօրություն նրա բնակիչների:

Պարտավորվում եմ պաշտպանել համայնքի իրավունքները, օրինական շահերը և սեփականությունը, ուժերիս անմնացորդ նվիրումով սատարել ժողովրդի հավատին, նպաստել նրա նյութական և հոգևոր վերելքին:»:

9. Երդումն արտասանելուց հետո հնչում է Հայաստանի Հանրապետության օրհներգը: Համայնքի ղեկավարը ստորագրում է երդման տեքստի տակ, որն ի պահ է հանձնվում համայնքապետարանին:

10. Երդման տեքստը ստորագրվելուց հետո՝ նիստը վարողը ելույթի համար ձայնը տալիս է համայնքի ղեկավարին:

11. Ելույթի համար տրվում է մինչև 20 րոպե ժամանակ:

12. Ելույթից հետո համայնքի ղեկավարը զբաղեցնում է նախագահողի տեղը և շարունակում վարել նիստը:

13. Ողջույնի խոսքերով կարող են հանդես գալ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Լոռու մարզպետարանի, Հայ Առաքելական եկեղեցու Գուգարաց թեմի ներկայացուցիչները, ինչպես նաև կարող են հրապարակվել ուղերձներ:

14. Ողջույնի խոսքերից և ուղերձների հրապարակումից հետո համայնքի ղեկավարը հայտարարում է նիստը փակված:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**« 14 » նոյեմբերի 2022թ. №46-Ա**

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆՍՏԱՎԱՅՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածով և 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.4 կետով՝

**համայնքի ավագանին որոշում է.**

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանի վարչական շենքի հիմնանորոգման նպատակով՝ համայնքապետարանը և ավագանու նստավայրը ժամանակավորապես տեղափոխել՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթ փող., 1-ին նրբ., թիվ 2 հասցեում գտնվող համայնքային կենտրոնի շենք:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ներսիսյան Արայիկ Մենժիկի | | | |
| Վարդումյան Հայկ Վազգենի | | | |
| Շահնազարյան Թամարա Էդիկի | | | |
| Պայյան Հարություն Միշիկի | | | |
| Ներսեսյան Իրինա Վազգենի | | | |
| Չիբուխչյան Արման Հրաչիկի | | | |
| Սիմոնյան Անահիտ Բաբկենի | | | |
| Պապիկյան Վահրամ Ռոմիկի | | | |
| Մարգարյան Սիլվա Ստեփանի | | | |
| Վերմիշյան Կարլեն Ջիվանի | | | |
| Չատինյան Վանո Վալերի | | | |
| Գրիգորյան Աննա Հրայրի | | | |
| Սերոբյան Անի Սամվելի | | | |
| Չատինյան Արթուր Հրաչիկի | | | |
| Ասրյան Աննա Տիգրանի | | | |

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ.

**2022թ. նոյեմբերի 14**

**գ. Լոռի Բերդ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**« 14 » նոյեմբերի 2022թ. №47-Ա**

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով՝

**համայնքի ավագանին որոշում է.**

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2022 թվականի դեկտեմբերի 23-ը, ժամը՝ 11:00-ն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ներսիսյան Արայիկ Մենժիկի | | | |
| Վարդումյան Հայկ Վազգենի | | | |
| Շահնազարյան Թամարա Էդիկի | | | |
| Պայյան Հարություն Միշիկի | | | |
| Ներսեսյան Իրինա Վազգենի | | | |
| Չիբուխչյան Արման Հրաչիկի | | | |
| Սիմոնյան Անահիտ Բաբկենի | | | |
| Պապիկյան Վահրամ Ռոմիկի | | | |
| Մարգարյան Սիլվա Ստեփանի | | | |
| Վերմիշյան Կարլեն Ջիվանի | | | |
| Չատինյան Վանո Վալերի | | | |
| Գրիգորյան Աննա Հրայրի | | | |
| Սերոբյան Անի Սամվելի | | | |
| Չատինյան Արթուր Հրաչիկի | | | |
| Ասրյան Աննա Տիգրանի | | | |

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ.

**2022թ. նոյեմբերի 14**

**գ. Լոռի Բերդ**